Արդ, ինչպէս յայտնի է, 610 թ. Բիւզանդիայի Փոկաս կայսրն սպանուեց իր ապստամբած Հերակլ զօրավարի կողմից, որը նոր կայսր հռչակուեց եւ գահին տիրեց երեք տասնամեակ (610-641): Նրա իշխանութեան առաջին մէկուկէս տասնամեակները եղան կայսրութեան էական թուլացման շրջանը: Օգտուելով գլխաւոր հակառակորդի խառնակ վիճակից՝ Իրանի արքայից արքայ Խոսրով Ապրուէզի յաղթական բանակները շատ արագ գրաւեցին Բիւզանդիայի գրեթէ բոլոր արեւելեան պրովինցիաները՝ 612-ին՝ Փոքր Ասիայի մեծ մասը, 614-ին՝ Պաղեստինը, 617-ին՝ Եգիպտոսը[1]: Հէնց այդ պատմական պահին տեղի ունեցաւ 385/387 եւ 591 թթ. բաժանումներով երկատուած Հայաստանի (Մեծ Հայքի) երկու մասերի վերամիաւորումը Սասանեանների տէրութեան կազմում:

Ներկայումս լիովին հնարաւոր է թւում փաստարկել, որ մեզ չխմբագրուածչհամառօտուած տարբերակով միայն մէկ ձեռագրում հասած (Վենետիկի Թիւ 1245. ընդօրինակուած է Հայոց ՌԾԳ – 1604 թ., ցաւալիօրէն, խիստ անուշադիր գրիչ Ստեփաննոսի կողմից՝ «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ ասացեալ» վերտառութեամբ, թ. 1ա-38բ[2]) այդ աշխարհագրական երկը (նրա շրջանառու՝ «ընդարձակ խմբագրութիւն» անուանումը չի կարող ճշգրիտ համարուել՝ հէնց նշուած պատճառով) սկզբնապէս շարադրուել է նախ եւ առաջ՝ իբրեւ մի յատուկ ծրագրային փաստաթուղթ-տեղեկատու՝ Տիզբոնում 615/616 թ. կայացած[3] (այլ հաշուարկով՝ 617/618-ին[4]), այսպէս կոչուած, «Պարսից ժողովին» մասնակցող հայկական «պատուիրակութեան» կողմից օգտագործուելու նպատակով: Մօտաւորապէս 642 թ. իր աշխատանքն սկսած եւ 659 թ. առաջին կէսին գրիչը վայր դրած Սեբէոս պատմիչի[5] ուղիղ վկայութեամբ՝ ժողովին մեկնողներն իրենց հետ էին վերցրել նման մի նիւթ. «Ունէին պատրաստական անդ ընդ ինքեանս զգիր սրբոյն Գրիգորի»[6]: Միւս զուգահեռը «Կնիք հաւատոյ» ժողովածոն է, որի ստեղծումը եւս մասնագէտները կապում են Կոմիտաս կաթողիկոսի եւ «Պարսից ժողովի» համատեքստի հետ[7]: Սեբէոսի ունեցած տեղեկութեան համաձայն՝ Սմբատ Բագրատունու եւ անձամբ Խոսրով Ապրուէզ արքայի գլխաւորութեամբ անցկացուած այդ «ժողովում» քննարկուել է լոկ դաւանական այն խնդիրը, որի արդիւնքում Հայոց եկեղեցու դաւանանքը հաստատուել է իբրեւ Սասանեան տէրութեան քրիստոնեայ համայնքների համար միակ ընդունելին (ըստ առկայ բնագրի՝ «Յորոյ

գրական հիմքի վրայ), Եր., 1963: Գրականութեան վերջին հիմնարար ամփոփումը տե՛ս **Բ. Յ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի*, մաս Ա, Եր., 2001:

1 Տե՛ս **Թ. Նէօլդէքէ**, *Պատմութիւն Սասանեան տէրութեան*, Թարգմ. **Ն. Քարամեան**, Վաղարշապատ–Ս. Էջմիածին, 1896, էջ 76-78; *История Византии*, т. I, Москва, 1970, էջ 364-366:

2 Ձեռագրի նկարագրութիւնը տե՛ս *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հտ. Բ, Յօրինեց **Հ. Բ. Վ. Սարգիսեան**, Վենետիկ–Ս. Ղազար, 1924, էջ 811-818:

3 Հմմտ. **Է. Լ. Դանիէլեան**, *Հայ եկեղեցու նկատմամբ Խոսրով Փարուէզի վարած քաղաքականութիւնը*, – ՊԲՀ, 1981, հմտ 4, էջ 197:

4 Տե՛ս **M. Van Esbroeck**, *L'encyclique de Komitas et la réponse de Mar Maroutha (617)*, – "Oriens Christianus", 85, էջ 162-175:

5 Տե՛ս **Ա. Յակոբեան**, *Սեբէոսի Պատմութեան հատուածաբաժանման խնդիրը եւ Զուարթնոցի տաճարի կառուցման մասին գլուխը*, – «Հանդէս ամսօրեայ», ՃԺԹ տարի, Վիեննա–Եր., 2005, էջ 213-270:

6 Տե՛ս ***Սեբէոսի եպիսկոպոսի*** *Պատմութիւն*, Չորրորդ տպագրութիւն, Բաղդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանիւ եւ ծանօթութեամբք ի ձեռն **Ստ. Մալխասեանց**, Եր., 1939, էջ 124; *Պատմութիւն* ***Սեբէոսի***, Աշխատասիրութեամբ **Գ. Աբգարեանի**, Եր., 1979, էջ 170:

7 *Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ... յաւուրս Կոմիտաս կաթուղիկոսի համահաւաքեալ*, Հրատ. **Կարապետ եպ.**, Վաղարշապատ, 1914; **Կոմիտաս կաթողիկոս**, *Կնիք հաւատոյ*, – «Մատենագիրք Հայոց», հտ. Դ, Է դար, Անթիլիաս, 2005; **M. Van Esbroeck**, *L'encyclique de Komitas et la réponse de Mar Maroutha*, էջ 162-175: